ՀՈԳԵՇՆՈՐՀ Տ. ՎԱՉԳԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ

Ավազանի անունով՝ Էդվարդ:

Ծնվել է 1965 թվականի հուլիսի 21-ին Էջմիածնի շրջանի Արտիմեդ (նախկինում՝ Աթարբեկյան) գյուղում:

1971-1982 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1982 թ. ընդունվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Հոգևոր Ճեմարան: 1984-86 թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1989 թ. ավարտել է Հոգևոր Ճեմարանը և նույն թվականի մայիսի 7-ին, ձեռամբ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպիսկոպոս Սանթուրյանի, ձեռնադրվել սարկավագ:

1990 թ. պաշտպանել է «Գրիգոր վարդապետ Սկևռացու կյանքը և մատենագրական ժառանգությունը» թեմայով ավարտաճառը:

Կուսակրոն քահանա է ձեռնադրվել 1991 թ. հուլիսի 21-ին՝ ձեռամբ գերաշնորհ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանի, և անմիջապես հրավիրվել դասախոսելու Սուրբ Էջմիածնի Հոգևոր ճեմարանում, ինչպես նաև նորաբաց Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնում:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին կից կիրակնօրյա դպրոցների վարիչ-տնօրեն է եղել 1993-95 թվականներին:

1995 թ. սեպտեմբերից Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Հայրապետի բարձր հրամանով ու կարգադրությամբ նշանակվել է Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Քրիստոնեական Դաստիարակության և քարոզչության կենտրոնի վարիչ-տնօրեն, ուր և պաշտոնավարում է առ այսօր:

1996 թ. ներկայացրել է վարդապետական թեզ «Սուրբ Գրիգոր Տաթևացու «Հարցմանց» և «Ոսկեփորիկ» գրքերի հայրախոսական աղբյուրները» թեմայով: Նույն թվականի հունիսի 23-ին, ձեռամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա-ի, ստացել է Մասնավոր վարդապետական չորս աստիճան: